**The European Union's "Support to Migration Policy Development and Relevant Capacity Building in Armenia" Programme**

**Եվրամիության «Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության և համապատասխան կարողությունների հզորացմանը» ծրագիր**

# Policy Brief
# Համառոտագիր

This project is funded by
the European Union
Ծրագիրը ֆինանսավորվել է
Եվրամիության կողմից

BRITISH COUNCIL

ICHD

This project is implemented by
Ծրագիրն իրականացնում են՝

ԲՐԻԹԻՇ ՔԱՈՒՆՍԻԼ

International Center for Human Development
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Migration Agency of the Ministry of Territorial Administration of RA
ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալություն

# Տեղաշարժվելու մեր իրավունքը

***Ելքի և մուտքի հարաբերությունների կարգավորումն օրախնդիր***

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Ներկայում ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունքի իրացմանն այս կամ այն կերպ առնչվում են մեկ տասնյակից ավելի օրենքներ և իրավական-նորմատիվ ակտեր: Սակայն, այդքանով հանդերձ, ոլորտի իրավական կարգավորումը լրջորեն կաղում է: Գուցե պատճառներից մեկն էլ այն է, որ կարևորագույն այս բնագավառում, փաստորեն, պետությունը չի գնացել միասնական պետական քաղաքականության մշակման և դրանից բխող միասնական և ամբողջական օրենսդրության ձևավորման ճանապարհով: Սա, իհարկե, աշխարհում եզակի և բացառիկ երևույթ չէ:

Աշխարհն՝ աշխարհով: Սակայն հայաստանյան ներկա անձնագրային և միգրացիոն կարգավորման համակարգերի առջև հառնում են մի շարք հարցեր, որոնք համակարգերն արդիականացնելու և մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից արդյունավետ դարձնելու հրամայականներ են առաջադրում: Օրինակ, արդյո՞ք ներկայիս անձնագրային համակարգը թույլ է տալիս ձևավորել և կայացնել երկքաղաքացիության ինստիտուտը: Արդյո՞ք ՀՀ քաղաքացու անձնագրում դրվող այսպես կոչված «ելքի» կնիքով իսպառ բացառում ենք զինծառայությունից խուսափելու հնարավորությունը: Եվ արդյո՞ք իրավապահ և դատական համակարգերի գործունեության ընթացակարգերն առավել արդյունավետ դարձնելու, զինված ուժերում ծառայությունն առավել գրավիչությամբ օժտելու փոխարեն, քաղաքացիների կողմից գիտակցված օրինախախտումները կանխարգելելու բեռը չենք դնում քաղաքացու տեղաշարժի իրավունքի չհիմնավորված սահմանափակման վրա:

Հարցերը կարելի է շարունակել, և ի վերջո հանգել շատ կոնկրետ մի շարք հանգամանքների, որոնցից թերևս կարևորագույնը, որ ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունքն ու դրա սահմանափակումները սահմանված չեն օրենքի մակարդակով, որի արդյունքում կարգավորված չեն՝

- ելքի և մուտքի ժամանակ ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակումների հիմքերը և ժամկետները, դրանց ստուգման և վերահսկման պայմանները, սահմանափակումները կիառող և պատասխանատու մարմինների իրավասությունները,
- ելքի և մուտքի ժամանակ քաղաքացիներից պահանջվող փաստաթղթերի ցանկը, իրավունքներն ու պարտականությունները
- հատուկ կատեգորիաների անձանց սահմանը հատելու հետ կապված առանձնահատուկ պայմանները,
- Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացու անձնագրի վավերականության չափանիշները և այլն:

## Համակարգային փոփոխությունն՞ր, թե «կոսմետիկ» վերաձևում

Կա տեսակետ, որ այս բացերը կարելի է լրացնել գործող օրենքներում և նորմատիվ-իրավական մյուս ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելով: Մինչդեռ ոլորտի հարաբերական ինքնուրույնությունը, քննարկվող հարցերի կարևորությունը և այն, որ առկա է ոչ միայն տեխնիկական, այլ նաև սկզբունքային փոփոխությունների կատարման անհրաժեշտություն, թույլ են տալիս պնդելու, որ առնձին օրենքի ընդունումն անհրաժեշտություն է:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Ակնկալվող սկզբունքային փոփոխությունները թելադրվում են նաև ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունքի իրացումը կարգավորող հարաբերությունները ժողովրդավարական և իրավական պետությանը բնորոշ բարձրագույն՝ օրենսդրական մակարդակով կարգավորելու հրամայականով: Առ այսօր այս ոլորտում գործում են դեռևս Խորհրդային ամբողջատիրական հասարակարգից մնացած իրավական ակտեր, իսկ պաշտոնյաներն առաջնորդվում են սովորություն դարձած գործելաոճով:

## Ինչպիսի՞ն պիտի լինի նոր համակարգը

Ամենից առաջ այն պետք է լինի *կամայականություններից ու երկակի ստանդարտներից զերծ*, ինչը ենթադրում է՝

- նախևառաջ, քաղաքացիների բոլոր իրավունքների իրացման և դրանց սահմանափակումների հետ կապված հարաբերությունների կարգավորում օրենքով,
- օրենքով չսահմանված որևէ սահմանափակման բացառում,
- համակարգի գործելակերպի համապատասխանեցում միջազգային իրավունքի նորմերին ու պրակտիկային և համընդհանուր ճանաչում գտած մարդասիրական սկզբունքներին,
- քաղաքացիների օրինական տեղաշարժի համար անխոչընդոտ պայմանների ապահովում,
- հրաժարում պետական ինստիտուտների պասիվ-իներցիոն գործելակերպից, երբ ոչ թե ինստիտուտներն են ջանքեր գործադրում քաղաքացուն ապացուցելու նրա ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման իրավասությունը, այլ քաղաքացին է ստիպված լինում ամեն գնով ապացուցել իր ազատ տեղաշարժի իրավունքը,
- պետական ինստիտուտներ-քաղաքացի հարաբերություններում հրաժարում վարչահրամայական գործելակերպից, որը ցայտունորեն դրսևորվում է պետական պաշտոնյաների մոտ գերիշխող այն մտածելակերպում, ըստ որի՝ առաջնային է ինստիտուցիոնալ շահը, իսկ քաղաքացու իրավունքներն ու շահերը՝ երկրորդային,
- պետական ինստիտուտների այնպիսի համակարգ, որտեղ ոչ միայն սահմանափակումներ ու պատժամիջոցներ են կիառում, այլ ամենից առաջ հանդես են գալիս որպես քաղաքացիների իրավունքների իրացման երաշխավորներ,
- պետական ինստիտուտների գործելակերպում հրաժարում օրենքով չսահմանված նախադեպային-իներցիոն ցանկացած մեխանիզմի կիրառումից,
- պետական ինստիտուտների ուղղվածություն դեպի նախաձեռնողական քաղաքականություն. վերջիններս պետք է կողմնորոշված և շահագրգիռ լինեն իրենց գործելակերպի անընդհատ նորացմամբ ու կատարելագործմամբ, իրենց պասիվ վարչարարությունը միջոցների սղությամբ արդարացնելու փոխարեն,
- օտարերկրյա պետություններում արտակարգ իրավիճակների առաջացման ժամանակ պետության և նրա ինստիտուտների կողմից իր քաղաքացիների շահերի և իրավունքների պաշտպանության պատրաստակամություն:

*Համառոտագիրը մշակվել է "Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության մշակմանն ու համապատասխան կարողությունների ձևավորմանը" ծրագրի շրջանակներում 2007թ-ի սեպտեմբերի 25-ին կայացած քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:*

*Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:*

*Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից:*